

## Սիրելի Կիպրահայեր,

Պետական Ներկայացուցիչ ընտրուելու եւ պաշտօն ստանձնելու ետք, այս «Լրատու»ն լոյս ընծայելով կը փափաքիմ պարբերաբար ձեզ հաղորդակից պահել այն աշխատանքներուն, որոնք կը տանիմ որպէս հայ համայնքին ներկայացուցիչ:

Արդէն Յունիս 1էն սկսեալ կը գործէ Պետական Ներկայացուցիչի Գրասենեակը եւ երեք հոգիւնց մնայուն անձնակազմով սկսած եմ հետեւիլ մեր համայնքը յուզող բոլոր հարցերուն թե՛ պետութեան, թե՛ հորհրդարանի եւ թե՛ Կիպրոսի հանրային կեանքի բոլոր ոլորտներէն ներս: Լառնաքայի եւ Լիմասոլի մեր հայրենակիցներու հարցերուն մօտէն հետեւելու համար, նշանակած եմ պատասխանատուներ այդ շրջաններուն մէջ, ինչպէս նաեւ՝ նշանակած եմ մամլոյ ներկայացուցիչ մը, որ պիտի զբաղի մեր համայնքին եւ տեղական լրատուական միջոցներուն միջեւ համադրութեամբ:

Կ'ուզեմ հաւատալ, թէ յառաջիկայ ինգամեակին բեղուն գործունէութիւն պիտի ունենանք, որուն մասին այս «Լրատու»ով տեղեակ պիտի պահենք ձեզ: Այս ձեւով տեր կ'ըլլամ թափանցիկ կերպով աշխատելու այն խոստումին, որ ձեզի տուի ընտրութենէ առաջ:

Սիրելի բարեկամներ եւ հայրենակիցներ,

Գրասենեակս, որ կը գտնուի Նիկոսիոյ մատչելի թաղամասի մը մէջ, բաց է բոլորիդ համար: Պատրաստ ենք մեր կարելիութեանց սահմաններուն մէջ ընդառաջել ձեր իւրաքանչիւրին ներկայացուցած դիմումին, ինչպէս նաեւ մեր լաւագոյնը ի սպաս դնել մեր համայնքին, վարժարաններուն, եկեղեցիին եւ բոլոր կազմակերպութիւններուն օգտին:

**Վարդգէս Մահտեսեան**

**Զայ Զամայնքի Պետական Ներկայացուցիչ**

## Կիպրահայ Զամայնքի Պետական Ներկայացուցիչի Գրասենեակ

21 Մայիս 2006-ի Հայ պետական ներկայացուցիչի ընտրութիւններէն անմիջապէս ետք, 1 Յունիս 2006-էն սկսեալ օրինաւոր ժամանակացոյցով սկսաւ գործել Հայ Պետական ներկայացուցիչի գրասենեակը օժտուած արդի սարքերով եւ ատակ անձնակազմով: Ստորեւ կը ներկայացնենք գրասենեակի մանրամասնութիւնները.-

### Քաղաքական Գրասենեակ

**Գրասենեակի Գործավար՝ Տիկ. Նայիրի Մուրատեան**  
**Քաղաքացիական Հարցերու Պատասխանատու՝**

**Պրն. Գեորգ Գազանճեան**

9B & C Kastorias Street, Ayia Paraskevi, 2002 Strovolos

Հեռախօս 22- 45 45 40

Հեռատիպ 22- 42 46 42

Ել.Հասցէ office@armenianmp.com

**Քաղաքական Գրասենեակը հանրութեան համար բաց է**

**Երկուշաբթիէն Ուրբաթ**

**Ժամը 9:00-13:00 եւ 15:00-17:00**

### Լառնաքայի պատասխանատու՝

**Պրն. Աւետիս Աւետիսեան**

հեռ. 99445784

### Լիմասոլի պատասխանատու՝

**Պրն. Յարօ Գասապեան**

հեռ. 99444157

## Խորհրդարանական Գործակից՝

Տիկ. Կապրիելա Պետրիտու

Խորհրդարանի Գրասենեակը հանրութեան համար բաց չէ

## Կիպրահայ Գաղութի Մամլոյ Ներկայացուցիչ՝ Տոքթ. Անդրանիկ Աշճեան

Գրասենեակ ներկայացող իւրաքանչիւր անհատի կամ ընտանիքի համար բացուած են թուագրեալ թղթածրարներ, յատուկ դիմումագրի ամբողջացումով եւ փաստաթուղթերու պատճեններով ու սկսած են հետապնդման աշխատանքները:

Արդէն իսկ ստացած ենք բազմաթիւ դիմումներ ըլլան անոնք քաղաքացիութեան, աշխատանքային, դպրոցական-համալսարանական օժանդակութեան, բժշկական, բնակարանային եւ այլ հարցերու կապակցութեամբ:

Դիմում կատարողներուն ազնիւ ուշադրութեան կ'ուզենք յանձնել, թէ կարգ մը հարցերու լուծումը երկար ժամանակի կը կարօտի, նայած տուեալներուն եւ օրինականութեան ձեւին:

Նախըտրելի պիտի ըլլայ Կիպրոս բնակութիւն հաստատելու գծով մեր հայրենակիցները օրինաւոր ձեւով մուտք գործեն երկրէն ներս, ըստ օրէնքի սահմանած պայմաններուն, որպէսզի աշխատանքները հեճազահ կերպով ընթանան եւ օրէնքի հակառակ երեւոյթներու դեմ յանդիման չգտնուին:

**Պետական Ներկայացուցիչին կողմէ զանազան ծրագիրներու մշակման ու յանձնախումբերու կազմութեան մանրամասնութիւնները ձեր տրամադրութեան տակ պիտի դրուին «Լրատու»ի յաջորդ թիւով, երբ տարուած աշխատանքները բիւրեղանան ու յստականան:**

## Եռամսեայ Գործունեութիւն

Առաջին եռամսեային՝ 1 Յունիս 2006 - 31 Օգոստոս 2006 կատարուած են զանազան աշխատանքներ որոնցմէ ցարդ իրականացած են հետեւեալները, որ կը փափաքիք ձեր տրամադրութեան տակ դնել առ ի գիտութիւն.-

### Աշխատանքային

Վեց Լառնաքայաբնակ անձեր գործ ստանձնեցին Լառնաքայի օդակայանէն ներս զանազան պաշտօններու գծով:

### Կեցութիւն

Հարկ եղաւ Պրն. Մահտեսեանի անմնիջական միջամտութեան հայ երիտասարդի մը երկրէն դուրս արտաքսման պարագային, որ առժամեայ կարգադրութեամբ մը դասաւորուեցաւ, ինչպէս նաեւ երկարաձգուեցան Պաֆոսի մէջ բնակութիւն հաստատած այլ երկու անհատներու կեցութեան արտօնագրերը:

Առօրեայ մեր գրասենեակի գործունեութեան մեծ բաժինը կ'ընդգրկէ տեսակցութիւններ կեցութեան դժուարութիւն ունեցողներու հետ,

ինչպէս նաեւ անհատական տեսակցութիւններ Պրն. Վարդգէս Մահտեսեանին հետ երբ կարիքը զգացուի: Զաղաքացիական հարցերու պատասխանատուն առօրեայ այցելութիւններով կը հետապնդէ հարցերը եւ տեղեակ կը պահէ գրասենեակն ու պետական ներկայացուցիչը, որը իր կարգին հարկ եղած միջամտութիւնները ի գործ կը դնէ պետական ծանօթութիւններուն միջոցաւ:

### Առողջապահական - բժշկական

Պրն. Մահտեսեանի կարգադրութեամբ, հայրենակից մը երիկամի պատուաստումի գործողութեան ենթարկուեցաւ:

### Կրթանպաստ

Կրթանպաստ ապահով-

ուեցաւ Մելգոնեան Կրթական Զաստատութեան Կիպրահայ նախկին աշակերտներուն, որոնք իրենց ուսումը կը շարունակեն օտար անձնական երկրորդական վարժարաններէ ներս: Պրն. Մահտեսեան յատուկ տեսակցութեամբ մը Տնտեսութեան նախարար Պրն. Միխալիս Սարրիսի հետ, յաջողեցաւ այս հարցին հիմնական լուծում տալ:

**Ղարաբաղէն  
պատանիներու այց**

Ղարաբաղէն ժամանած ազատամարտիկներու որբ մնացած պատանիներու երկու խումբեր, ընդհանուր թիւ 100 հոգի, յաջորդաբար 3 եւ 10 Յունիս 2006ին այցելեցին Կիպրոս, Ռուսահայ գործարարի մը նիւթական օժանդակութեամբ: Պրն. Վարդգէս Մահտեսեան տեղեակ պահուելով, երկու վերոյիշեալ խումբերուն անմիջապէս շրջապտոյտներ դասաւորուեցան, որոնց շարքին Նիկոսիոյ Ս. Աստուածածին եկեղեցի եւ Առաջնորդարան:

Անոնք ըստ պատշաճին հիւրասիրուեցան եւ հաճելի

պահեր անցուցին իրենց տարեկից կիպրահայ պատանիներու հետ եւ Կիպրոսէն մեկնեցան գոհունակութեամբ: Պտոյտի ծախսերը յանձն առաւ Զայ պետական ներկայացուցիչը:

**Պաշտօնական այցելութիւն**

Երկուշաբթի 5 Յունիս 2006 Պետական ներկայացուցիչը Անթիլիասի Մայրավանքին մէջ ընդունուեցաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի կողմէ: Վեհափառ հայրը շնորհաւորելէ ետք նորընտիր ներկայացուցիչը թելադրեց, թէ համայնք-պետութիւն կապը պետք է ամրապնդուի միշտ ի մտի ունենալով Կիպրահայ գաղութի ընդհանրական եւ գերագոյն շահերը: Զանդիպումին ներկայ էր նաեւ Կիպրոսի Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ Տ. Վարուժան Արքեպիսկոպոս:

**Բարեսիրական  
աջակցութիւն**

Շաբաթ 17 Յունիս 2006ին խումբ մը հայ պատանիներ, ընկերակցութեամբ Պրն. Վարդգէս Մահտեսեանի, այ-

ցելեցին «Cans for Kids»-ի վերաօգտագործման աշխատանոցը: Տիկիներ Յասմիկ Զօլիի եւ Ռոզի Խարալամպուսի գլխավորութեամբ, պատանիները ստացան անհրաժեշտ տեղեկութիւններ:

Ի տես կատարուած աշխատանքին եւ ի նպաստ աշխատանոցը նոր սարքով մը օժտելու ֆոնտին, Պրն. Վարդէ Մատեսեան կատարեց պատշաճ նուիրատուութիւն մը:

### **Պետական մակարդակի հանդիպումներ**

Հինգշաբթի 8 Յունիս 2006-ին Պրն. Վարդէ Մատեսեան յատուկ հանդիպում մը ունեցաւ Ներքին Գործոց Նախարարութեան ընդհանուր տնօրէն Պրն. Լազարոս Սավիտիսի հետ, քաղաքացիական հարցերու առնչութեամբ:

Երեքշաբթի 27 Յունիս 2006-ին երեք համայնքներու՝ Հայ, Մարոնիթ եւ Լատին ներկայացուցիչները տեսակցութիւն մը ունեցան Խորհրդարանի Նախագահ Պրն. Տիմիթրիս Խրիստոֆիասի

հետ, փոքրամասնութիւնները յուզող ընդհանուր հարցերու կապակցութեամբ:

Երկուշաբթի 24 Յուլիս 2006-ին Պետական ներկայացուցիչը հանդիպեցաւ Ընդհանուր Դատախազ Պրն. Պետրոս Զլիրիտիսի հետ: Հանդիպման ընթացքին արծարծուեցաւ նաեւ Մելգոնեան Կրթական Հաստատութեան փակման հարցը:

### **Շրջանաւարտից հիւրասիրութիւն**

Այս տարուայ կղզիի բոլոր հայ շրջանաւարտները, ըլլան անոնք Նարեկ Ազգային վարժարաններու, կամ երկրորդական վարժարաններու եւ Կիպրական College-ներու, 29 Յունիս 2006-ի յետմիջօրէին հիւրասիրուեցան Տեր եւ Տիկին Վարդէ Մատեսեաններու բնակարանին մէջ: Ներկայ էին նաեւ Կաթողիկոսական Փոխանորդ Տ. Վարուժան Արքեպիսկոպոս, Նիկոսիոյ եւ Լառնաքայի հոգեւոր հովիւները եւ Նարեկ Ազգային վարժարաններու Տնօրէնութիւնն ու ուսուցչական կազմը:

Առիթը գեղեցիկ էր եւ մթնոլորտը անզուգական, ուր քով քովի եկած էին 60 հոգինոց խումբ մը հայ ուսանողներ 12- 22 տարեկան, կրթական մշակներու, Սրբազան Հօր եւ Հայ համայնքի պետական ներկայցուցիչի հովանիին ներքեւ:

**Հանդիպում Հայ Աւետարանական Համայնքին հետ**

Երկուշաբթի 5 Յուլիս 2006ին Հայ Աւետարանական եկեղեցւոյ պատուիրակութիւնը տեսակցութիւն մը ունեցաւ Պրն. Վարգէս Մահտեսեանին հետ: Անոնք շնորհաւորեցին նորընտրեալ պետական ներկայացուցիչը եւ յաջողութիւն մաղթեցին անոր ինչպէս նաեւ յայտնեցին իրենց զօրակցութիւնը ապագային միասնաբար գործակցելու հեռանկարով:

**Այց Լիբանանեան դեսպանատուն**

Ի տես Լիբանանեան տաճնապի անակնկալ յառաջխաղացքին, Երկուշաբթի 24 Յուլիս 2006 Պետական

Ներկայացուցիչը ընկերակցութեամբ Թեմիս Կաթ. Փոխանորդ Տ. Վարուժան Արքեպիսկոպոսի, այցելութիւն մը տուաւ Կիպրոսի մէջ Լիբանանի դեսպան Պրն. Միշէլ Էլ Խուրիին: Անոնք Կիպրահայ գաղութի զօրակցութիւնը յայտնեցին, Լիբանանի ինպաստ տարուելիք մարդասիրական օժանդակութեան:

**Տեսակցութիւն**

**UNDP- ACTի Տնօրէնին հետ**

Հինգշաբթի 31 Օգոստոս 2006ին, Պրն. Մահտեսեան, Թեմիս Կաթողիկոսական Փոխանորդ Տ. Վարուժան Արքեպիսկոպոս եւ Վարչական Ժողովի ներկայացուցիչ Պրն. Սեպուհ Դաւիթեան հանդիպում մը ունեցան UNDP- ACT Ծրագիրներու Բաժանմունքի Տնօրէն Պրն. Անտրու Րասսըլի հետ: Անտրու Րասսըլի հետ: Անոնք տեղեակ պահուեցան Վիքթորիա փողոցի Հայոց եկեղեցւոյ վերանորոգութեան աշխատանքներուն մասին: Ըստ փոխանցումին մօտաւորապէս 2 տարիէն պիտի ամբողջանայ նորոգութիւնը:



## Ծանօթանանք Կիպրոսի Հանրապետության Օրենքներուն

Որպէս Կիպրոսի օրինաւոր քաղաքացիներ, պարտինք տեղեակ ըլլալ պետութեան օրենքներուն եւ անոնց հետ կապուած գործողութիւններուն: Պետական Ներկայացուցիչի գրասենեակը եւ «Լրատու»-ն այս սիւնակով մեր հայրենակիցներուն պիտի ներկայացնեն պետական զանազան գործողութիւններու կապուած մանրամասնութիւններ, զանոնք ծանօթացնելու նպատակով:

### Կիպրոսի Հանրապետության տարածքին օրինաւոր մուտք եւ կեցութիւն

#### **Temporary Resident Visitor (TRV)- ժամանակաւոր Այցելու**

Ոեւէ Եւրոպական Միութեան ոչ-անդամ երկրի քաղաքացի, որ Կիպրոս կ'այցելէ, կը ստանայ վերոյիշեալ կարգավիճակը, Կիպրոսի հիւպատոսարանէ ստացուած մուտքի արտօնագրով (VISA) կամ Կիպրոսէն յղուած հրաւերով:

Այս կարգավիճակը ունեցող ոեւէ անձ կրնայ Կիպրոսէն ներս բնակիլ, տրուած արտօնագրի ժամանակամիջոցին, առանց որեւէ տեսակի աշխատանք կատարելու:

Արտօնագիրը կրնայ երկարաձգուիլ, դիմում կատարելով բնակութեան նահանգի Ոստիկանութեան Օտարահպատակներու եւ Ներգաղթի Բաժանմունքին (Aliens & Immigration Unit):

Յիշեցնենք, թէ TRV կարգավիճակ ստացողներուն բացարձակապէս արգիլուած է աշխատիլ: Այս օրենքի խախտումը



կ'ենթադրե ենթակային ձերբակալութիւնը եւ նոյնիսկ՝ Կիպրոսէն արտաքսումը:

### **Temporary Resident Employment (TRE)- Ժամանակաւոր Աշխատանքի իրաւունք**

ՈւէԷ օտարահպատակ, որ աշխատելու նպատակով Կիպրոս կը ժամանէ, պարտի ունենալ այս կարգավիճակը:

Այս կարգավիճակը կը շնորհուի այնպիսի պարագաներու, երբ գործատերեր չեն կրնար Կիպրոսի կամ Եւրոպական Միութեան անդամ այլ երկիրներու քաղաքացի մը ապահովել, իրենց փնտռած աշխատանքին համար: Գործատերը պարտի նախապէս պայմանագիր (contract) կնքել օտարահպատակին հետ, ապա դիմում ներկայացնել Ոստիկանութեան Օտարահպատակներու եւ Ներգաղթի Բաժանմունքին (Aliens & Immigration Unit): Դիմումը ընդունուելէն եւ TRE արտօնագրի վաւերացումէն ետք միայն ենթական կրնայ մուտք գործել Կիպրոս:

### **Student-Ուսանող**

Ուսանողի կարգավիճակ կրնան ստանալ այն օտարահպատակները, որոնք կ'ընդունուին Կիպրոսի բարձրագոյն կրթական հիմնարկներու, կամ այլ վարժարաններու մէջ:

Արտօնագրերու դիմումները կը ներկայացուին կրթական հաստատութիւններուն կողմէ: Ենթական պարտի այս արտօնագրով մուտք գործել Կիպրոս, անմիջապէս գրանցուիլ Ոստիկանութեան Օտարահպատակներու եւ Ներգաղթի Բաժանմունքին մօտ (Aliens & Immigration Unit) եւ ենթարկուիլ օրէնքէն սահմանուած բժշկական քննութիւններուն:

Ուսանող մը պարտի հետեւիլ ուսումնական լրիւ ծրագրին եւ այդ ժամանակամիջոցին իրաւունք չունի աշխատելու:

### **Political Assylum- Քաղաքական ապաստան**

Քաղաքական ապաստանի կրնան դիմել այն օտարահպատակները, որոնք իրենց երկրի իշխանութիւններուն կողմէ

մե **քաղաքական** պատճառներով հետապնդուած են, կամ իրենց **կեանքը կամ անձնական ազատութիւնը** սպառնալիքի տակ կը գտնուի այդ երկրի իշխանութիւններուն կողմէ, իրենց գաղափարախօսական, կրօնական պատկանելիութեան կամ այլ նման պատճառներով:

Ենթական կը ներկայանայ Ոստիկանութեան, եւ դիմում կը ներկայացնէ քաղաքական ապաստանի: Անմիջապէս կը շնորհուի կեցութեան ժամանակաւոր արտօնագիր՝ TRV, որպէս Ապաստանի Դիմող (Assylum Seeker):

Ենթակային թղթածրարը կը փոխանցուի Փախստականներու բաժանմունքին (Assylum Unit):

Փախստականներու բաժանմունքը յաջորդող ամիսներուն հարցաքննութեան կը հրաւիրէ ենթական եւ Եւրոպական սպասարկութիւններու հետ գործակցաբար կը ստուգէ անոր դիմումը:

Եթէ ենթական իսկապէս քաղաքական ապաստանեալ է, այդ ժամանակ անոր կը շնորհէ Ապաստանեալի կարգավիճակ (Refugee Status), որով ան կրնայ օրինաւոր կերպով ապրիլ ու աշխատիլ Կիպրոսի մէջ:

Եթէ ենթակային դիմումը մերժուի, ան պարտի անմիջապէս լքել կղզին եւ վերադառնալ իր հայրենիքը:

Հակառակ պարագային, ան կը ձերբակալուի եւ կալանքի տակ դրուելով կ'արտաքսուի երկրէն:

### **Permanent Residence- Մնայուն Կեցութեան Կարգավիճակ**

Ուել օտարահպատակ, որ կը փափաքի մնայուն կեցութեան կարգավիճակ ստանալ, պարտի իր դիմումը ներկայացնել Ոստիկանութեան Օտարահպատակներու եւ Ներգաղթի Բաժանմունքին (Aliens & Immigration Unit) կամ Ներքին Գործոց Նախարարութեան Ներգաղթի Սպասարկութեան (Migration Department):

Այս կարգավիճակին տիրանալու համար, ենթակայէն կը պահանջուի մեծածաւալ նիւթական ներդրում կատարել Կիպրոսէն ներս եւ կամ ապահովել իր ապրուստը՝ արտա-

սահմանեն ներմուծուած գումարներով:

**Citizenship-Քաղաքացիութիւն**

Կիպրական քաղաքացիութիւնը կը շնորհուի **Գրանցումով (Registration)** կամ **Չպատակագրումով (Naturalization)**:

**Գրանցում** կրնան ստանալ հետեւեալ օտարահպատակները.

ա. Բոլոր 18 տարեկանէն վար եղողները, որոնք ծնողներէն մին Կիպրոսի քաղաքացի է (եթէ հայրը կիպրացի է, Գրանցում կրնան ստանալ 1960էն ետք ծնածները, իսկ եթէ մայրը կիպրացի է՝ 1999էն ետք ծնածները):

բ. 18 տարեկանէն վեր եղողները, որոնք ծնած են 1960էն առաջ եւ իրենց հայրը կիպրացի է կամ էր:

գ. Չափահասներ, որոնք ամուսնացած են կիպրացի քաղաքացիի հետ, երեք տարի ամուսնութենէ ետք կրնան ստանալ կիպրական քաղաքացիութիւն եթէ փաստեն, թէ իսկապէս կը կենակցին իրենց ամուսինին կամ տիկնոջ հետ: Այս օրէնքէն զանց կ'առնուին բոլոր անոնք, որոնք ապօրինի կերպով մուտք գործած են կամ բնակած են Կիպրոսի մէջ:

**Չպատակագրում** կրնան ստանալ բոլոր այն օտարահպատակները, որոնք վերջին 10 տարիներուն ընթացքին կ'ամբողջացնեն 7 լրիւ տարիներու օրինաւոր կեցութիւն (TRV, TRE կամ՝ Permanent Residence) Կիպրոսի մէջ եւ դիմումը ներկայացուելէն առաջ լրիւ 12 ամիս երկրէն չեն մեկնած :

**Յարկ է նշել, թէ Կիպրոսի Խորհրդարանը ներկայիս կը քննարկէ նոր օրէնսդրութիւն մը, որու համաձայն վերոյիշեալ կարգավիճակները կրնան լրիւ կամ մասամբ բարեփոխութեան ենթարկուիլ: Երբ վերջնական օրէնսդրութիւնը վաւերացուի, «Լրատու»ի միջոցաւ մեր հայրենակիցները տեղեակ պիտի պահուին:**



## ՄՐՏԱԳԻՆ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Կիպրահայ Գաղութի բոլոր Անդամներուն՝  
իրենց ցուցաբերած Վստահության համար  
ԵՆ

Բոլոր անոնց՝ որոնք շնորհաւորեցին զիս  
ընտրութեանս առիթով

### ՎԱՐԴԳԵՍ ՄԱՐՏԵՍԵԱՆ

Կիպրահայ Համայնքի  
Պետական Ներկայացուցիչ

### ԿԻՊՐԱՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻ ԳՐԱՍԵՆԵԱԿ

#### Քաղաքական Գրասենեակ

9B & C Kastorias Street, Ayia Paraskevi, 2002 Strovolos  
Յեռախօս 22- 45 45 40, Յեռատիպ 22- 42 46 42  
Ել. Հասցէ office@armenianmp.com

#### Խորհրդարանական Գրասենեակ

Office Δ-2-2, House of Representatives, 1402 Nicosia  
Յեռախօս 22- 40 72 02, Յեռատիպ 22- 40 74 42  
Ել. Հասցէ vmahdessian@parliament.cy